



USAID
FROM THE AMERICAN PEOPLE



ՄԱԴ
Միջազգային Կենտրոն
Development National Center of Armenia

**ԱՊՐԱՆՔԱՅԻՆ
ՆՇԱՆՆԵՐԻ
ԳՐԱՆՑՄԱՆ
ՈՒՂԵՑՈՒՅՑ**



ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Այս ուղեցույցը ստեղծվել է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) միջոցով: Դետագոտության բովանդակությունը միայն հեղինակներին է և պարտադիր չէ, որ արտահայտի ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:



Երևան - 2016

Բովանդակություն

Ներածություն	3
1. Ընդհանուր նկարագիր	4
Ի՞նչ է ապրանքային նշանը	4
Ինչո՞ւ գրանցել ապրանքային նշան	4
Ինչո՞ւ է կարևոր ապրանքային նշանը	5
Կարո՞ղ է արդյոք արտադրողն օգտագործել նույն ապրանքային նշանը տարբեր արտադրանքների համար	5
Արդյոք արտադրողի ֆիրմային անվանման գրանցումը բավարա՞ր է	6
Որո՞նք են ապրանքային նշանի ընդունելի նիշերը	7
Ինչո՞ւ ապրանքային նշանը կարող է ենթակա չլինել գրանցման.....	8
Ո՞վ կարող է դիմել ապրանքային նշանի գրանցման համար	11
Ինչքա՞ն է ապրանքային նշանի պահպանության ժամկետը	11
Ի՞նչ պետք է հիշել ապրանքային նշան ընտրելիս կամ ստեղծելիս	12
2. Ապրանքային նշանի գրանցման գործընթացը	14
2.1. Հայտի ներկայացում	15
2.1.1. Հայտի լրացում	15
2.1.2. Կից փաստաթղթեր և պետական տուրքեր.....	25
2.2.Փորձաքննություն	28
2.2.1. Նախնական փորձաքննություն.....	28
2.2.2. Հրապարակում և ըստ էության փորձաքննություն.....	30
2.3. Բողոքարկում	33
2.4. Գրանցում	34
2.5. Ապրանքային նշանի նկատմամբ իրավունքների դադարումը	35
Հավելվածներ	36
Հավելված 1. Գրանցման հայտի ձևաթուղթը	36
Հավելված 2. Դասակարգման միջազգային համակարգ.....	38
Հավելված 3. Ապրանքային նշանների գործառնությունների պետական տուրքերը	44

Ներածություն

Սույն ուղեցույցը նախատեսված է օգնելու այն անձանց կամ ձեռնարկություններին, որոնք ցանկանում են գրանցել իրենց ապրանքային նշանը՝ նպատակ ունենալով օգնել սպառողներին ճանաչելու և ձեռք բերելու իրենց ապրանքները կամ ծառայությունները:

Ուղեցույցում ներկայացված են ապրանքային նշանի գրանցման համար իրականացվող գործընթացների գործնական քայլերը և անհրաժեշտ մանրամասները:

Սույն ուղեցույցի օգտատերը պետք է նկատի ունենա, որ այն չի հավակնում լինել ապրանքային նշանի գրանցման սպառիչ ներկայացում և չպետք է օգտագործվի որպես միակ հիմք առևտրային որոշումներ կայացնելիս: Բոլոր իրավական հարցերի կամ խնդիրների պարագայում հարկավոր է հիմնվել Հայաստանում գործող համապատասխան իրավական ակտի դրույթների վրա և (կամ) դիմել անկախ իրավաբանական խորհրդատվության:

Ուղեցույցը պատրաստված է մշակման պահի դրությամբ գործող համապատասխան օրենսդրության հիման վրա: Գրանցման գործընթացը փաստացի սկսելուց առաջ անհրաժեշտ է վերաուսումնասիրել համապատասխան օրենսդրությունը և կարգերը:

Սույն ուղեցույցում ապրանքային նշանի միջազգային գրանցումը ներկայացված չէ:

Ուղեցույցը մշակվել է ԱՄՆ ՄՁԳ-ի ֆինանսավորմամբ համատեղ իրականացվող «Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» (USAID/PRP) ծրագրի շրջանակում՝ «Ի-Վի Քոնսալթինգ» ՓԲԸ-ի կողմից:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

Ի՞նչ է ապրանքային նշանը

Ապրանքային (սպասարկման)¹ նշանը տարբերակիչ նշան է, որը տարբերակում է որևէ անձի (ֆիզիկական կամ իրավաբանական) արտադրած ապրանքները (մատուցած ծառայությունները)² այլ անձանց ապրանքներից և ծառայություններից:

Ինչո՞ւ գրանցել ապրանքային նշան

Ապրանքային նշանի գրանցումը պարտադիր չէ, սակայն խորհուրդ է տրվում: Ապրանքային նշանի պահպանությունը նշանի սեփականատիրոջը տրամադրում է նշանն օգտագործելու, իր ապրանքներն այլ անձանց ապրանքներից տարբերելու կամ վճարի դիմաց այլ անձանց նշանի օգտագործման թույլատվություն տալու բացառիկ իրավունք: Ապրանքային նշանները խթանում են ձեռնարկատիրության զարգացումը՝ սպառողների շրջանում ընդլայնելով առանձին արտադրողների ապրանքների ճանաչումը, նպաստելով ապրանքի վաճառքին և եկամտաբերության աճին:	Ապրանքային նշանի գործածումը կանխում է անբարեխիղճ մրցակցությունը՝ այլ արտադրողների կողմից կեղծ կամ շփոթության աստիճան նման ապրանքի արտադրությունը, առաջմղումը և վաճառքը: Այսպիսով, գրանցված ապրանքային նշանի առկայությունը պաշտպանում է արտադրողին, որը անբարեխիղճ մրցակցության դեպքում կարող է դատական կարգով արգելել կեղծ կամ շփոթության աստիճան նման ապրանքի իրացումը, պահանջել և ստանալ կրած վնասի դրամական փոխհատուցում և այլն:
---	--



¹ Այսուհետ՝ «ապրանքային կամ սպասարկման նշանը» հակիրճ ներկայացվում է որպես «ապրանքային նշան»:

² Այսուհետ՝ «ապրանքները և ծառայությունները» հակիրճ ներկայացվում են որպես «ապրանքներ»:

Ինչո՞ւ է կարևոր ապրանքային նշանը

Ապրանքային նշանները կարևոր դերակատարում ունեն արտադրողի բրենդի և մարքեթինգային ռազմավարության և սպառողների շրջանում հեղինակության բարձրացման գործում: Արտադրողի բարի համբավը վստահություն է ստեղծում, որը նպաստում է ձեռք բերել հավատարիմ հաճախորդներ: Սպառողները, ովքեր գոհ են մնացել արտադրանքից, շատ հավանական է, որ կրկին կգնեն տվյալ արտադրանքը: Սրա համար գնորդները պետք է կարողանան դյուրին տարբերակել նույն ապրանքները:

Սպառողները հաճախ զգայական կապվածություն են ձևավորում ապրանքային նշանի նկատմամբ:

<p>Ճիշտ մշակված և առաջնորդված ապրանքային նշանը արժեքավոր ներդրում է բիզնեսի համար:</p>		<p><i>Բրենդի արժեք՝</i> 250 միլիարդ ԱՄՆ դոլար</p>
<p>Որոշ համաշխարհային ընկերությունների համար այն կարող է լինել իրենց ամենարժեքավոր ակտիվը: Հանրահռչակ ապրանքային նշանների արժեքները կազմում են միլիարդավոր դոլարներ:</p>		<p><i>Բրենդի արժեք՝</i> 175 միլիարդ ԱՄՆ դոլար</p>

Կարո՞ղ է արդյոք արտադրողն օգտագործել նույն ապրանքային նշանը տարբեր արտադրանքների համար

Մեկ արտադրող կարող է ունենալ բազմաթիվ ապրանքային նշաններ: Կախված իր բրենդային ռազմավարությունից՝ արտադրողն ինքն է որոշում՝ տարբեր արտադրանքների համար օգտագործել նույն ապրանքային նշանը, թե տարբեր ապրանքային նշաններ:

Նոր արտադրանքների համար նույն ապրանքային նշանի օգտագործումը նպաստում է, որպեսզի դրանք օգտվեն ապրանքային նշանի առկա իմիջից և բարի համբավից: Մյուս կողմից՝ նոր ապրանքային նշանի գործածումը հնարավոր է՝ ավելի բնորոշ է նոր արտադրանքին: Այն կարող է նպաստել թիրախային սպառողների խմբերի (օր.՝ երեխաներ, երիտասարդ կանայք և այլն) ձևավորմանը և ընդարձակմանը կամ ստեղծել ինքնատիպ իմիջ նոր ապրանքային տեսականու համար:





Արտադրողը կարող է նաև օգտագործել իր ֆիրմային անվանումը կամ դրա մի մասը որպես ապրանքային նշան. այս պարագայում այն պետք է գրանցվի որպես ապրանքային նշան:

Արդյոք արտադրողի ֆիրմային անվանման գրանցումը բավարա՞ր է

Կա թյուր կարծիք, որ գրանցելով արտադրողի ֆիրմային անվանումը ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում, այդ անվանումը ինքնըստինքյան կդառնա և կպահպանվի որպես ապրանքային նշան: Սակայն անհրաժեշտ է հասկանալ ֆիրմային անվանման և ապրանքային նշանի միջև տարբերությունը: Ֆիրմային անվանումը արտադրողի բիզնեսի ամբողջական անվանումն է, օրինակ՝ «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ, որը անհատականացնում է կազմակերպությունը: Ապրանքային նշանն այն նիշն է, որը տարբերակում է արտադրողի արտադրանքը:

Որո՞նք են ապրանքային նշանի ընդունելի նիշերը

Որպես ապրանքային նշաններ՝ կարող են գրանցվել գրաֆիկորեն պատկերման հնարավորություն ունեցող նիշերը³.

Ընդունելի նիշեր	Օրինակներ
Բառեր, բառակապակցություններ, անուններ կամ կարգախոսներ:	
Տառեր կամ թվեր:	
Նկարներ, պատկերներ կամ խորհրդանշաններ:	
Եռաչափ պատկերներ, մասնավորապես ապրանքի կամ դրա փաթեթավորման (տարայի) արտաքին տեսքը:	
Հոլոգրամներ, գույներ, գույների համակցություններ կամ կոմպոզիցիաներ:	
Չայնային ազդանշաններ:	

³ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենք, հոդված 8:



Ինչո՞ւ ապրանքային նշանը կարող է ենթակա չլինել գրանցման

Ստորև ներկայացված են այն հիմնական պատճառները, որոնց հիման վրա նիշը ենթակա չէ որպես ապրանքային նշան գրանցման⁴:

Անընդունելի նիշեր	Օրինակներ
Չունի տարբերակիչ հատկություն:	
Նույնական կամ նման է ավելի վաղ գրանցված ապրանքային նշանին և հետևաբար հանրության մեջ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում:	
Բացառապես բաղկացած է այնպիսի նշումներից, որոնք առևտրում ծառայում են ապրանքի արտադրության կամ ծառայության մատուցման ժամանակը, ապրանքի կամ ծառայության տեսակը, որակը, քանակը, ստեղծման նպատակը, արժեքը, աշխարհագրական ծագումը կամ այլ բնութագրերը նշելու համար:	
Բացառապես բաղկացած է այնպիսի նշումներից կամ ցուցումներից, որոնք համընդհանուր են դարձել խոսակցական պրակտիկայում կամ առևտրային պրակտիկայում:	
Բացառապես ներկայացնում է ապրանքի արտաքին ձևը, որը բխում է զուտ ապրանքի բնույթից:	
Հակասում է հասարակական կարգին, մարդասիրության կամ բարոյականության սկզբունքներին, ինչպես նաև անհարիր է ազգային կամ հոգևոր արժեքներին:	

⁴ Ապրանքային նշանի գրանցումը մերժելու բացարձակ և հարաբերական հիմքերի ամբողջական տեղեկատվության համար տե՛ս՝ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենք, հոդվածներ 9 և 10:

Անընդունելի նիշեր	Օրինակներ
<p>Սպառողներին կարող է մոլորության մեջ գցել ապրանքների կամ ծառայությունների աշխարհագրական ծագման, դրանց որակի, բնույթի կամ արտադրողի վերաբերյալ հարցերում:</p>	
<p>Պարունակում է պետական գինանշաններ, դրոշներ կամ խորհրդանիշեր, պետությունների պաշտոնական անվանումներ կամ դրանց կրճատ ձևեր, միջազգային և միջպետական կազմակերպությունների լրիվ կամ կրճատ անվանումներ, պաշտոնական խորհրդանիշեր, պաշտոնական դրոշներ, կնիքներ, պարզևներ ու այլ տարբերանշաններ կամ շփոթելու աստիճան նման է դրանց:</p>	
<p>Պարունակում է մեծ նշանակություն ունեցող հոգևոր կամ մշակութային ժառանգություն համարվող խորհրդանիշեր, մասնավորապես՝ կրոնական, եթե այն պարունակում է կրոնական կամ բարոյական արժեքները նսեմացնող տարրեր:</p>	
<p>Բաղկացած կամ պարունակում է գինիներ անհատականացնող աշխարհագրական նշում այն գինիների համար, որոնք չեն ծագել տվյալ աշխարհագրական վայրից, կամ սպիրտային խմիչքներ անհատականացնող աշխարհագրական նշում այն սպիրտային խմիչքների համար, որոնք չեն ծագել տվյալ աշխարհագրական վայրից`</p> <p><i>* Նույնիսկ եթե նշվում է ապրանքների իրական ծագումը, կամ աշխարհագրական նշումն օգտագործվում է թարգմանաբար կամ «տեսակ», «տիպ», «ոճ», «նմանակում» և այլ նման արտահայտությունների զուգակցմամբ:</i></p>	

Անընդունելի նիշեր	Օրինակներ
<p>Վերարտադրում կամ պարունակում է տարրեր, որոնք նույնական կամ շփոթելու աստիճան նման են ՀՀ կամ համաշխարհային մշակութային ժառանգության պատկերներին կամ դրանց պաշտոնական անվանումներին, ինչպես նաև ֆոնդերում և հավաքածուներում պահպանվող մշակութային արժեքների պատկերներին:</p>	
<p>Բաղկացած կամ պարունակում է աշխարհագրական նշում և գրանցման է ներկայացվել այնպիսի ապրանքների համար, որոնք չեն ծագել տվյալ աշխարհագրական վայրից, եթե այդ ապրանքային նշանի օգտագործումը ՀՀ-ում մոլորության մեջ է գցում հանրությանն ապրանքների իրական ծագման վայրի հարցում`</p> <p><i>* Կիրառվում է նաև այն աշխարհագրական նշման նկատմամբ, որը, չնայած նշում է ապրանքների իրական ծագումը, սակայն մոլորեցնում է հանրությանը` իբր ապրանքները ծագել են մեկ այլ տարածքից:</i></p>	

Նշում. աշխարհագրական նշումները և ծագման տեղանունները, որոնք պահպանվում են ՀՀ-ում, կարող են ներառվել ապրանքային նշանի մեջ միայն այն դեպքում, երբ հայտատուն օրենքով սահմանված կարգով ստացել է դրանց օգտագործման իրավունք:

Այլ երկրների աշխարհագրական նշումները և ծագման տեղանունները թույլատրվում է օգտագործել գրանցվող ապրանքային նշանում, եթե դա չի հակասում օրենքի պահանջներին, գրանցված է ծագման երկրում, և հայտատուն ունի դրա օգտագործման իրավունք:

Ապրանքային նշանում ներառված գրանցված աշխարհագրական նշումները և ծագման տեղանունները ապրանքային նշանի չպահպանվող տարրեր են:

«Հայ», «Հայաստան», «հայկական» բառերը և դրանց թարգմանությունները ֆիրմային անվանման տարբերակող նշանակության անվան մեջ օգտագործելու թույլտվության համար գործում է տարեկան տուրք

բազային տուրքի 600-պատիկի չափով («Պետական տուրքերի մասին» ՀՀ օրենք, հոդված 20)՝ 600 հազար դրամ:

Ո՞վ կարող է դիմել ապրանքային նշանի գրանցման համար

<p>Ապրանքային նշանի գրանցման համար կարող են դիմել ֆիզիկական կամ իրավաբանական անձինք:</p> <p>Հայտը պետք է վերաբերի մեկ ապրանքային նշանի:</p> <p>Հայտը ներկայացնում է այն անձը, ով դիմում է ապրանքային նշանի գրանցման համար, հայտատուի ներկայացուցիչը կամ պետական լիազոր մարմնում գրանցված ապրանքային նշանի հավատարմատարը:</p>	<p>Ապրանքային նշանի հավատարմատարը, որը լավատեղյակ է ապրանքային նշանի գրանցման մարմնի գործունեությանը և ապրանքային նշանների որոնման և գրանցման վերաբերյալ ունի փորձառություն, կարող է խնայել դիմորդի ժամանակը՝ օգնելով ներկայացնել գրագետ և ամբողջական հայտ:</p>
--	---

Ինչքա՞ն է ապրանքային նշանի պահպանության ժամկետը

Գրանցված ապրանքային նշանի պահպանության ժամկետը տասը տարի է (հայտի ներկայացման թվականից հաշված): Պահպանության ժամկետը կարող է բազմակի երկարաձգվել բոլոր ապրանքների կամ դրանց մի մասի համար՝ յուրաքանչյուր անգամ տասը տարի ժամկետով:

Երկարաձգման դիմումը տրվում է ապրանքային նշանի պահպանության ընթացիկ ժամկետի վերջին տարվա ընթացքում:

Ապրանքային նշանի պահպանության ժամկետը կարող է երկարաձգվել նաև ապրանքային նշանի գրանցման գործողության ժամկետի ավարտից հետո՝ վեց ամսվա ընթացքում, ներկայացված դիմումի հիման վրա՝ լրացուցիչ պետական տուրք վճարելու դեպքում⁵:

⁵ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենք, հոդվածներ 18 և 19:

Ի՞նչ պետք է հիշել ապրանքային նշան ընտրելիս կամ ստեղծելիս

Ապրանքային նշան ընտրելը բիզնեսի համար կարևոր քայլ է, ինչպես նաև բիզնեսի բրենդի և մարքեթինգի ռազմավարության կարևոր օղակ:


Ընդհանուր առմամբ, ապրանքային նշան ընտրելու միանշանակ կանոններ չկան: Հետևյալ կետերը կարող են օգտակար ուղղորդում հանդիսանալ.

Ուղղորդում	Նկարագրություն
Ստուգեք, որ Ձեր ընտրած ապրանքային նշանը համապատասխանի գրանցման բոլոր անհրաժեշտ իրավական պահանջներին:	Փնտրեք Ձեր ընտրած ապրանքային նշանը գործող ապրանքային նշանների մեջ: Ստուգեք, որ այն նույնը չէ կամ շփոթելու աստիճան նման չէ առկա ապրանքային նշաններին:
Համոզվեք, որ ապրանքային նշանը դյուրին է կարդալ, արտասանել, գրել և հիշել, ինչպես նաև հարմար է գովազդի տարբեր միջոցների համար:	Համոզվեք, որ նշանն անցանկալի այլ իմաստներ չունի հայերենում (արտահանման երկրների լեզուներում): Ստուգեք, որ անվանման համապատասխան ինտերնետ հասցեն (դոմեյն) ազատ է գրանցման համար:
Մտացածին բառեր	Սրանք հորինված բառեր են, որոնք կոնկրետ իմաստ չունեն: <i>Օրինակ՝ «Colgate» ատամի մածուկի բրենդը:</i> Այսպիսով, մտացածին բառերը հեշտ է պահպանելը: Մյուս կողմից՝ սպառողները կարող է դժվարությամբ հիշեն, հետևաբար՝ կարող է անհրաժեշտություն առաջանալ մարքեթինգի հավելյալ ջանքերի:

Ուղղորդում	Նկարագրություն
Պայմանական նշաններ	<p>Սրանք այն բառերն (նշաններ) են, որոնց նշանակությունը կապ չունի արտադրանքի հետ: <i>Օրինակ՝ «Apple»:</i> Պայմանական նշանները հեշտ է պահպանել, սակայն, դրանց մարքեթինգը հավելյալ ջանքեր կպահանջի, որպեսզի սպառողների շրջանում նշանի և արտադրանքի միջև կապ առաջանա:</p>
Քուլտուր նշաններ	<p>Այս նշաններն ինչ-որ կերպ հուշում են արտադրանքի մասին: <i>Օրինակ, արևի պատկերը ջեռուցիչ սարքի համար:</i> Գրավիչ կողմն այն է, որ դրանք կարող են ինքնին գովազդի ձև հանդիսանալ: Մյուս կողմից՝ որոշ դեպքերում հուշող նշանները կարող են համարվել արտադրանքը նկարագրող և ենթակա չլինել գրանցման:</p>

2. ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՑԸ

Գրանցման գործընթացի փուլերը



2.1. Հայտի ներկայացում

Ապրանքային նշանի գրանցման գործընթացն սկսվում է համապատասխան հայտը լրացնելով և կից անհրաժեշտ փաստաթղթերի հետ միասին Մտավոր սեփականության գործակալությունն ներկայացնելով՝ գրավոր կամ էլեկտրոնային եղանակով:	ՀՀ Էկոնոմիկայի նախարարության Մտավոր սեփականության գործակալություն Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, 0010, Երևան, Գլխավոր պողոտա, Կառավարական տուն 3 Հեռ.՝ +374-11-597534 Կայքէջ՝ http://www.aipa.am
---	---

2.1.1. Հայտի լրացում

Տարբերակիչ հատկություն

Համոզվեք, որ Ձեր ապրանքային նշանն ունի տարբերակիչ հատկություն և ներառում է թույլատրելի նիշեր:

Ստուգեք որ Ձեր ապրանքային նշանը նույնը չէ կամ շփոթելու աստիճան նման չէ առկա ապրանքային նշաններին: Կատարեք որոնում Մտավոր սեփականության գործակալության կայքի «Ապրանքային նշաններ» բաժնի «Որոնում» ենթաբաժնում: Հղում՝ <http://aipa.am/hy/national-procedure-reg/>:

Որոնման դաշտերը լրացվում են հայերեն: «Նշանի անվանումը» և «Նշանի սեփականատերը» դաշտերը կարող եք լրացնել նաև անգլերեն լեզվով:

(210) Հայտի համարը	<input type="text"/>
(220) Հայտի ներկայացման թվականը	<input type="text"/>
(111) Գրանցման համարը	<input type="text"/>
(540) Նշանի անվանումը	<input type="text"/>
(561) Գրադարձություն	<input type="text"/>
(510) Ապրանքներ և ծառայություններ	<input type="text"/>
(511) Նիցայի դասակարգումը	<input type="text"/>
(730) Նշանի իրավատերը	<input type="text"/>
(730) Նշանի սեփականատերը (անգլերեն)	<input type="text"/>
Պայմանների բավարարում	<input type="text" value="բոլոր"/>
	<input type="button" value="Փնտրել"/> <input type="button" value="Մաքրել"/>

Լրացված դաշտերի օրինակ

(210) Հայտի համարը	<input type="text" value="20000768"/>
(220) Հայտի ներկայացման թվականը	<input type="text" value="06.11.2000"/>
(111) Գրանցման համարը	<input type="text" value="6120"/>
(540) Նշանի անվանումը	<input type="text" value="ZIGZAG"/>
(561) Գրադարձություն	<input type="text" value="ՉԻԳԶԱԳ"/>
(510) Ապրանքներ և ծառայություններ	<input type="text" value="Ռադիո"/>
(511) Նիցայի դասակարգումը	<input type="text" value="35"/>
(730) Նշանի իրավատերը	<input type="text" value="«Չիգզագ» ՍՊԸ"/>
(730) Նշանի սեփականատերը (անգլերեն)	<input type="text" value="ZIGZAG"/>
Պայմանների բավարարում	<input type="text" value="բոլոր"/>
	<input type="button" value="Փնտրել"/> <input type="button" value="Մաքրել"/>

«Պայմանների բավարարում» դաշտում կարող էք ընտրել «բոլոր» տարբերակը, որպեսզի որոնումը կատարվի նշված բոլոր տվյալներին համապատասխան, կամ «մասնակի», որպեսզի որոնումը կատարվի նշվածներից ըստ մեկ կամ ավելի տվյալների:

Որոնման արդյունքը տրվում է հետևյալ տեսքով՝

Ձեր հարցմանը համապատասխան գտնվել է 3 գրառում

Հայտի համար	Անվանում	Հայտի ներկայացման թվականը	Գրանցման համարը
20000768	ԶԻԳԶԱԳ ZIGZAG	06.11.2000	6120
20130377	ԶԻԳԶԱԳ ՄԵԳԱՍԹՈՐ ZIGZAG MEGASTORE	22.03.2013	20431
20140672	ՅՈՒՅԱԴ AMETHYST ZIGZAG	16.04.2014	21843

Ներկայացվում է հայտի համարը, անվանումը, հայտի ներկայացման թվականը և գրանցման համարը:

Ավելի մանրամասն տեղեկություն ստանալու համար կարող էք սեղմել համապատասխան տողի վրա, օրինակ՝

Հայտի համար	Անվանում	Հայտի ներկայացման թվականը	Գրանցման համարը
20000768	ԶԻԳԶԱԳ ZIGZAG	06.11.2000	6120
20130377	ԶԻԳԶԱԳ ՄԵԳԱՍԹՈՐ ZIGZAG MEGASTORE	22.03.2013	20431
20140672	ԶԵԹՄԻՔՍ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ ZMIX ELECTRONICS	07.05.2014	22177

Որից հետո բացվում է նոր պատուհան՝

(540) ապրանքային նշանի պատկերը



(540) նշանի անվանումը

ԶԻԳԶԱԳ ZIGZAG

(111) ապրանքային նշանի պատկերը

6120

(151) գրանցման թվականը

12.06.2001

(181) գրանցման գործողության ենթադրյալ ավարտը

06.11.2010

(186) երկարաձված գործողության ավարտը

06.11.2010

(210) հայտի համարը

06.11.2010

(220) հայտի ներկայացման թվականը

06.11.2000

(220) ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկ

դաս 35. առևտրամիջնորդական ոչ բորսային գործունեություն.
դաս 37. ռադիոէլեկտրոնային սարքավորումների նորգում և տեղակայում.
դաս 39. բեռների պահպանում և պահեստավորում.
դաս 42. պարենային և ոչ պարենային առևտուր:

(591) գույնը և գունային համակցությունը

Նշանը պահպանվում է կապույտ, սպիտակ և սև գունային համակցությամբ

(730) նշանի իրավատերը, հասցեն, երկրի կոդը

«Զիգզագ» ՍՊԸ

ք. Երևան, Հյուսիսային պողոտա 1, տարածք 18

AM

Մտավոր սեփականության գործակալության կայքը հղում է տալիս նաև «ROMARIN» միջազգային ապրանքային նշանների տվյալների բազային՝ <http://www.wipo.int/romarin/search.xhtml>: Այստեղ կարող էք որոնել Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպությունում գրանցված և միջազգային ընթացակարգով իրավական պահպանություն ստացած ապրանքային նշանները:

Լրացրեք հայտը

Ապրանքային նշանի գրանցման հայտի ձևաթուղթը կարող եք ներբեռնել Մտավոր սեփականության գործակալության կայքի «Ապրանքային նշաններ» բաժնի «Ձևաթղթեր և տուրքեր ենթաբաժնից»⁶, հղում՝ http://aipa.am/u_files/file/ApplicationForms/TM/TMhajtn.pdf:⁷

Հայտի լրացման համար նաև կարող եք գրանցվել հետևյալ հղումով՝ <https://my.aipa.am/> և համապատասխան հրահանգավորումներ ստանալով, հայտը լրացնել առցանց:

Համակարգից օգտվելու համար անհրաժեշտ է ունենալ բոլոր փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները, ինչպես նաև էլեկտրոնային ստորագրություն: Էլեկտրոնային թվային ստորագրության մասին լրացուցիչ տեղեկատվություն կարող եք ստանալ հետևյալ հղումով՝ <https://www.ekeng.am/hy/>:

Դուք կարող եք նույն էլեկտրոնային ստորագրությամբ ներկայացնել նաև այլ հայտեր և փաստաթղթեր: Համակարգում գրանցվելով՝ կարող եք նաև տեսնել նախկինում Ձեր ներկայացրած հայտերը և կից փաստաթղթերը, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, ուղարկել տվյալ հայտի հետ կապված այլ փաստաթղթեր: Բոլոր էլեկտրոնային փաստաթղթերը պետք է ներկայացվեն PDF ֆորմատով:

Հայտը ներկայացվում է հայերեն: 1-4 դաշտերում լրացվում են հայտատուի մասին տեղեկությունները:

Հայտ ապրանքային նշանի գրանցման	Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալություն Գլխավոր պողոտա, Կառավարական տուն 3, 3,0010, Երևան	
1. Սույնով խնդրարկվում է ներկայացված ապրանքային նշանի գրանցում	(լրացնում է գործակալությունը)	(լրացնում է գործակալությունը)
2. Հայտատու՝ 2.1. իրավաբանական անձի լրիվ անվանումը կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը՝	երկրի ծածկագիրը ըստ ՄՍՅԿ ST3-ի <input type="checkbox"/> ջաղաքացիության <input type="checkbox"/> բնակչության երկրի <input type="checkbox"/> իրավական գործունեության	
2.2. հայտատուի գտնվելու վայրը (հասցեն)՝		
2.3. հեռախոսահամարը	ֆաքսը	Էլ. փոստի հասցեն
2.4. <input type="checkbox"/> մեկից ավելի հայտատուներ (հայտատուների մասին տվյալներն ըստ 2.1.-2.3-րդ կետերի տրվում են լրացուցիչ թղթի վրա)		
3. <input type="checkbox"/> Հայտատուի ներկայացուցիչը՝		
3.1. ներկայացուցչի լրիվ անվանումը կամ անունը, ազգանունը՝		
3.2. ներկայացուցչի գտնվելու վայրը (հասցեն)՝		
3.3. հեռախոսահամարը	ֆաքսը	Էլ. փոստի հասցեն
<input type="checkbox"/> լիազորագիրը գործակալությունում է, հայտ N <input type="checkbox"/> լիազորագիրը կցվում է <input type="checkbox"/> լիազորագիրը կներկայացվի ավելի ուշ		
4. Նամակագրության հասցեն՝ (փոստային հասցեն, հեռախոսահամարը, ֆաքսը, Էլ. փոստի հասցեն)		

5. Ապրանքային նշանը՝ 5.1. ապրանքային նշանի պատկերը <input type="checkbox"/> չափերը գերազանցում են 8 x 8 սմ (պատկերը կցվում է)	5.1. ապրանքային նշանի համառոտ նկարագրությունը, տառադարձությունն ու թարգմանությունը
5.3. <input type="checkbox"/> նշանը գրանցել և հրապարակել, ստանդարտ նիշերով	5.11. <input type="checkbox"/> նշանը գունավոր է, գույները, որոնց համար խնդրարկվում է պահպանությունը՝
5.4. <input type="checkbox"/> որպես տարբերակիչ տարր խնդրարկվում է գույնի պահպանություն	
5.5. <input type="checkbox"/> նշանը ծավալային է (լրացուցիչ պատկերները կցվում են)	5.12. <input type="checkbox"/> չպահպանվող տարրերն են՝
5.6. <input type="checkbox"/> նշանը հոլոգրաֆիական է	
5.7. <input type="checkbox"/> նշանը տեղադրական է	5.13. <input type="checkbox"/> նշանը գրանցված է ծագման երկրում, վկայագրի պատճենը կցվում է
5.8. <input type="checkbox"/> նշանը ձայնային է	
5.9. <input type="checkbox"/> նշանը հավաստագրային է	5.14. <input type="checkbox"/> կցվում է նշանի 5 սև-սպիտակ պատկեր
5.10. <input type="checkbox"/> նշանը կոլեկտիվ է, կանոնակարգը կցվում է	5.15. <input type="checkbox"/> կցվում է նշանի 5 գունավոր պատկեր

⁶ Ապրանքային նշանի հետ կապված այլ գործառնությունների համար լրացվող ձևաթղթերն առկա են Մտավոր սեփականության գործակալության կայքի «Ապրանքային նշաններ» բաժնի «Ձևաթղթեր և տուրքեր» ենթաբաժնում, հղում՝ <http://aipa.am/hy/forms/>:

⁷ Ապրանքային նշանի գրանցման հայտի ձևաթուղթը նաև տրված է սույն ուղեցույցի Յավելված 1-ում:

Ապրանքային նշանի պատկերը

Ապրանքային նշանի ներկայացվող պատկերը պետք է ունենա որակյալ գրաֆիկական կատարում և ներկայացվի որակյալ, հարթ և սպիտակ, ամնվազն 80 գ/քառ.մ տեսակարար կշռով թղթի վրա, 5x5 չափերով: Կախված նշանի չափերից, լուսանկարը կամ դրոշմվածքը կարող է լինել մինչև 8x10 սմ: Եթե ապրանքային նշանի պատկերը գերազանցում է 8x8 սմ չափսերը, ապա 5.1 դաշտում պետք է նշեք համապատասխան վանդակը և հայտին կցեք պատկերը:


Եթե որպես նշան գրանցման է ներկայացված բառ կամ բառային արտահայտություն և ապրանքային նշանի հայտում նշված չեն դրանց նկատմամբ որոշակի պահանջներ, ապա համարվում է, որ տվյալ բառը կամ բառային արտահայտությունն ամբողջությամբ տրված են ստանդարտ տառատեսակով:

Ապրանքի պիտակը որպես նշան գրանցման պարագայում պատրաստի պիտակն իր իրական չափերով կարող է ներկայացվել որպես հայտարկվող նշանի պատկեր, եթե դրա չափերը չեն գերազանցում 21x29.7 սմ: Ավելի մեծ չափով պիտակի դեպքում պատկերը տրվում է փոքրացված չափով:

Եթե գրանցման է ներկայացվում ծավալային (եռաչափ) ապրանքային նշան (5.5 դաշտ), ապա կցվում է այդ նշանի ընդհանուր տեսքը՝ բոլոր անհրաժեշտ պրոյեկցիաները: Նշանի լուսանկարները կամ տպագրական դրոշմվածքները ինչպես ձևաթղթում, այնպես էլ դրան կից ներկայացվում են այն գույնով կամ գունային համակցությամբ, որով ներկայացվում է նշանի գրանցումը:

Ապրանքային նշանի բնութագիրը


5.2 դաշտում նկարագրության մեջ տրվում է ապրանքային նշանի բնութագիրը՝ դրա տեսակը (բառային, պատկերային և այլն), բաղկացուցիչ տարրերի նկարագրությունը, նշանի և դրա առանձին տարրերի իմաստային նշանակությունը:

Բնութագրի պահանջ	Օրինակ	
Եթե բառային նշանը կամ դրա մի մասը չունի իմաստային նշանակություն, ապա տրվում է դրա կազմման եղանակը: Օրինակ՝ մի քանի բառերի առաջին վանկերը, հապավումները, մտացածին բառ և այլն:	HSBC - The Hongkong and Shanghai Banking Corporation	
Եթե բառային նշանը հայերենում հազվադեպ է գործածվում (օրինակ՝ հատուկ տերմին, պատմական անուն, կամ գործածությունից դուրս եկած բառ), ապա տրվում է դրա իմաստի պարզաբանումը:	«Սեպուհ». նշանակում է՝ նախարարական տոհմից սերված իշխան հին Հայաստանում:	
Ոչ հայերեն բառային նշանների կամ այդպիսի տարր պարունակող համակցված նշանների դեպքում տրվում է դրա գրադարձությունը՝ հայոց լեզվի այբուբենի տառերով, և թարգմանությունը, եթե նշանն ունի բառային իմաստ:	«Sony». գրադարձությունը՝ «Սոնի»:	
Եթե նշանը կամ դրա մի մասը պատկերային է, ապա տրվում է դրա մեջ մտնող բոլոր տարրերի նկարագրությունը և նշվում է դրա իմաստային նշանակությունը, եթե այդպիսին կա: Վերացական բնույթի դեպքում նշվում է, թե ինչ է այն խորհրդանշում:		Նշանը տրվում է աջ կողմից կծած խնձորի տեսքով, կծած մասը տրվում է դուրսն առանձին՝ խնձորի վերը:
		Նշանի իմաստը գալիս է Աստվածաշնչից Ադամի և Եվայի պատմությունից: Կծած խնձորը խորհրդանշում է իմաստության ծառը:

Ձայնային կամ լուսային նշան գրանցման ներկայացնելու դեպքում պետք է ներկայացվեն նաև դրանց ձայնագրված (տեսագրված) տեսալսատեղիները կամ սկավառակները (5.8 դաշտ):

- *ձայնային նշան*. տրվում է ձայնի տեսակը (երաժշտական ստեղծագործություն կամ դրա մի մասը, որն է ծագում ունեցող աղմուկ և այլն): Եթե նշանի մեջ օգտագործված է երաժշտական ստեղծագործություն, ապա նկարագրության մեջ տրվում է դրա նոտագրությունը:
- *լուսային նշան*. տրվում են լուսային ազդանշանների, դրանց հաջորդականության, լուսարձակման երկարության, տևողության և այլ առանձնահատկությունների բնութագրերը:

Գունավոր նշանի դեպքում նշվում է դրա գույնը կամ գունաշարը (5.11 դաշտ): Գույների նկարագրությունը պետք է համապատասխանի նշանի մեջ օգտագործված գույներին:

	<p>Նշանը պահպանվում է կապույտ, սպիտակ և սև գունային համակցությամբ:</p>
---	--

Առաջնայնություն և դասը

6.1-6.10 կետերը լրացվում են ապրանքային նշանի ավելի վաղ առաջնայնություն խնդարկելու պարագայում:

6. <input type="checkbox"/> խնդարկվում է առաջնություն	6.2. <input type="checkbox"/> ցուցահանդեսում ցուցանմուշի առաջին ցուցադրման թվականով, մանրամասները լրացուցիչ թերթի վրա և ցուցահանդեսի կազմակերպչի տված հավաստագիրը
6.1. <input type="checkbox"/> առաջին հայտի ներկայացման թվականով	<input type="checkbox"/> կցվում են <input type="checkbox"/> կներկայացվեն սույն հայտի ներկայացման օրվանից 3 ամսվա ընթացքում
6.3. առաջին հայտի N	6.4. առաջին հայտի ներկայացման օրվանից 3 ամսվա ընթացքում
6.6. <input type="checkbox"/> առաջին հայտի վավերացված պատճենը կցվում է	6.5. առաջին հայտի ներկայացման երկիրը (կազմակերպությունը) ըստ ՄՍՀԿ ՏՅ3-ի
6.7. <input type="checkbox"/> առաջին հայտի պատճենը կներկայացվի սույն հայտի ներկայացման օրվանից 3 ամսվա ընթացքում	6.8. <input type="checkbox"/> առաջին հայտի թարգմանությունը կցվում է
6.10. <input type="checkbox"/> մեկից ավելի առաջնություններ (6.3-6.9-րդ կետերի տվյալները ներկայացվում են	6.9. <input type="checkbox"/> առաջին հայտի թարգմանությունը կներկայացվի սույն հայտի ներկայացման օրվանից 3 ամսվա ընթացքում
7. ԱՃՄԴ-ի դասերին համապատասխան խմբավորված ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկը, որոնց համար խնդարկվում է գրանցումը	լրացուցիչ թերթի վրա)
ԱՇՄԴ-ի դաս	ապրանքները և (կամ) ծառայությունները

7-րդ կետում նշվում է Դասակարգման միջազգային համակարգի (Նիցցայի դասակարգիչ⁸) դաս(եր)ը, որին (որոնց) համապատասխանում է Ձեր ապրանքը: Ընդհանուր առմամբ, կան 45 տարբեր դասեր: Օրինակ՝ մեղրը համապատասխանում է դաս 30-ին: Եթե ներկայացվող ապրանքային նշանը պատկանում է մի քանի դասի, հայտի մեջ նշեք բոլորը՝ ըստ աճող հերթականության: Ապրանքները պետք է նշվեն ճշգրիտ տերմիններով՝ հնարավորություն տալով դյուրին նույնականացնել ապրանքը:

⁸ Դասերի ցանկն առկա է Մտավոր սեփականության գործակալության «Ապրանքային նշաններ» բաժնի «Դասակարգման միջազգային համակարգ» ենթաբաժնում, հղում՝ <http://aipa.am/hy/good-service-classification/> կամ տե՛ս՝ սույն ուղեցույցի Հավելված 2:

2.1.2. Կից փաստաթղթեր և պետական տուրքեր

Հայտին կցվող փաստաթղթերը կարող են ներկայացվել այլ լեզուներով: Այդ դեպքում ՀՀ հայտատուները պարտավոր են դրանց հայերեն թարգմանությունը ներկայացնել հայտի հետ, իսկ օտարերկրյա հայտատուները՝ հայտը ներկայացնելու օրվանից երկամսյա ժամկետում:

Հայտին կցվում են նաև արտոնագրային հավատարմատարի կամ ներկայացուցչի իրավասությունը հաստատող փաստաթուղթը (լիազորագիրը), եթե հայտը ներկայացվում է նրա միջոցով:

8. Ստորագրությունը _____

8.1. _____
(անունը, ազգանունը, պաշտոնը)

8.2. թվական _____ 201 թ.

8.3. ստորագրողը հայտատուն է հայտատուի ներկայացուցիչն է

9. Վճարված է _____ դրամ պետական տուրք՝ անդորրագիրը կցվում է

9.1. վճարման ձև _____

10. Հայտին կից ներկայացվում են՝ _____ լրացուցիչ թերթեր, այլ փաստաթղթեր _____

(յուրաքանչյուր փաստաթղթի անվանումը և թերթերի քանակը)

Հայտին կցվում են նաև հայտ ներկայացնելու և փորձաքննություն անցկացնելու համար սահմանված չափով պետական տուրքի վճարման անդորրագիրը:

Սահմանված պետական տուրքերը կարող եք վճարել Պետական վճարումների էլեկտրոնային համակարգի (հղում՝ <https://www.e-payments.am/hy/state-duties/step3/service=4438/>) կամ բանկային վճարման միջոցով:

Պետական վճարումների էլեկտրոնային համակարգ

Քայլ 1 Քայլ 2 **Քայլ 3** Քայլ 4

Լրացրեք վճարման պայմանները

Վճարման նպատակ	Ապրանքային նշանի գրանցման հայտ ներկայացնելու համար
Ստացող	Էլոնումիկայի նախարարություն
Գանձապետական հաշվեհամար	9000050166700
Վճարողի տեսակ	<input checked="" type="radio"/> Ֆիզիկական անձ <input type="radio"/> Անհատ ձեռնարկատեր <input type="radio"/> Իրավաբանական անձ
Շահառուի ՉԳՅ	<input type="text"/>
Շահառուի անուն ազգանուն	<input type="text"/>
Էլ. փոստ	<input type="text"/>
Գումարը	<input type="text"/> <<Դ <small>ա. Ֆիզիկական անձանց կամ մինչև 25 աշխատող ունեցող իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի համար՝ 7500 դրամ բ. 25-ից 100 աշխատող ունեցող իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի համար՝ 15000 դրամ գ. 100-ից ավելի աշխատող ունեցող իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի համար՝ 30000 դրամ.</small>
Միջնորդավճար	<input type="text"/> <<Դ

Վճարման եղանակ

Բանկային վճարում կատարելու համար անհրաժեշտ տվյալներ՝

Վճարման նպատակ	Ապրանքային նշանի գրանցման հայտ ներկայացնելու համար
Գանձապետական հաշվեհամար	900005016200
Ստացող՝	Էլոնումիկայի նախարարություն

Ֆիզիկական անձինք կամ մինչև 25 աշխատող ունեցող անհատ ձեռնարկատերերը կամ իրավաբանական անձինք ապրանքային նշանների գրանցման և այլ գործառնությունների հետ կապված որոշ գործողությունների համար պետական տուրքերը վճարում են 75 տոկոս զեղչով, իսկ 25-ից 100 աշխատող ունեցող իրավաբանական անձինք՝ 50 տոկոս զեղչով⁹:

Ապրանքային նշանի գրանցման հայտի և փորձաքննության պետական տուրքերի չափ, դրամ

	Ֆիզ. անձանց կամ մինչև 25 աշխատող ունեցող իրավ. անձանց կամ անհատ ձեռնարկատերերի համար	25-ից 100 աշխատող ունեցող իրավ. անձանց կամ անհատ ձեռնարկատերերի համար	100-ից ավելի աշխատող ունեցող իրավ. անձանց կամ անհատ ձեռնարկատերերի համար
Գրանցման հայտ ներկայացնելու համար	7500	15000	30000
Փորձաքննություն անցկացնելու համար	10000	20000	40000
մեկից ավելի յուրաքանչյուր դասի համար՝ լրացուցիչ	3750	7500	15000

Ո՞ր դեպքերում ներկայացված հայտը և կից փաստաթղթերը կարող են չհամապատասխանել օրենքի պահանջներին

⁹ Ապրանքային նշաններին առնչվող պետական տուրքերի վճարի նպատակները և չափերը (ըստ հայտատուի տեսակի) տրված են սույն ուղեցույցի Յավելված 3-ում: Ցանկն առկա է Մտավոր սեփականության գործակալության «Ապրանքային նշաններ» բաժնի «Ձևաթղթեր և տուրքեր. վճարման եղանակը» ենթաբաժնում, հղում՝ <http://aipa.am/hy/payment-method/>:

- Եթե ապրանքային նշանի գրանցման համար Ձեր ներկայացրած հայտը և փաստաթղթերը չեն համապատասխանում օրենքի պահանջներին, ապա Մտավոր սեփականության գործակալությունը հնգօրյա ժամկետում այդ մասին գրավոր ծանուցում է Ձեզ՝ առաջարկելով երկամսյա ժամկետում կատարել օրենքի պահանջները՝
- Նշում, որից ակնհայտորեն կամ ենթադրաբար պարզ է, որ ներկայացնում եք ապրանքային նշանի գրանցման հայտ,
 - Նշում, որը հնարավորություն է տալիս նույնականացնելու Ձեզ,
 - Նշումներ, որոնք հնարավորություն են տալիս կապ հաստատելու Ձեզ կամ Ձեր ներկայացուցչի հետ (*առկայության դեպքում*),
 - Գրանցման ներկայացված նիշի բավականին հստակ պատկերը,
 - Ապրանքների ցանկը, որոնց համար ներկայացնում եք ապրանքային նշանի գրանցումը,
 - Օրենքով սահմանված պետական տուրքի վճարման անդորրագիրը¹⁰:

2.2. Փորձաքննություն

2.2.1. Նախնական փորձաքննություն

Մտավոր սեփականության գործակալության ապրանքային նշանների բաժինը ստուգում է հայտը, որպեսզի համոզվի, որ այն համապատասխանում է օրենքով սահմանված պահանջներին (օրինակ՝ արդյոք դիմումը ներկայացնելու համար նախատեսված գումարը վճարված է, կամ արդյոք դիմումը ճիշտ է լրացված):

Հայտն անցնում է նախնական փորձաքննություն և եթե այն համապատասխանում է օրենքով սահմանված պահանջներին, ապա այն հրապարակվում է և նշանակվում է ըստ եռօրյա փորձաքննություն:

Նախնական փորձաքննությունն անցկացվում է հայտի ներկայացման թվականը սահմանելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

¹⁰ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենք, հոդված 41:

Չայտի վերաբերյալ պահանջներ ¹¹	Չայտի նախնական փորձաքննությունը ¹²
<p>Չայտը պետք է վերաբերի մեկ ապրանքային նշանի: Չայտը ներկայացվում է հայերեն: Չայտին կցվող փաստաթղթերը կարող եք ներկայացնել այլ լեզվով: Այդ դեպքում պարտավոր եք դրանց հայերեն թարգմանությունը ներկայացնել հայտի հետ: Չայտին կցվում են՝</p> <ul style="list-style-type: none"> ▪ հայտ ներկայացնելու և փորձաքննություն անցկացնելու համար օրենքով սահմանված պետական տուրքի վճարման անդորրագիրը, ▪ Ձեր ներկայացուցչի իրավասությունները հաստատող փաստաթուղթը (եթե հայտը ներկայացվել է ներկայացուցչի միջոցով): Չայտը պետք է պարունակի՝ ▪ հայտարկված նիշի հստակ պատկերը և նկարագրությունը, ▪ այն ապրանքների ցանկը, որոնց համար ներկայացնում եք ապրանքային նշանի գրանցման հայտը, որոնք խմբավորված են Նիցցայի դասակարգչի դասերին համապատասխան՝ ըստ դասերի համարների աճման: <p>Չայտն ըստ անհրաժեշտության պետք է պարունակի նշում առ այն, որ՝</p> <ul style="list-style-type: none"> ▪ հայտարկված նիշը եռաչափ է, ▪ հայտարկված նիշը հոլոգրաֆիկ է, ▪ հայտարկված նիշը ձայնային է, ▪ գունային համակցությունն ապրանքային նշանի տարբերակիչ հատկանիշն է: <p>Չայտը, ըստ անհրաժեշտության, պետք է պարունակի նաև հետևյալը՝</p> <ul style="list-style-type: none"> ▪ նշում հայտարկված նիշի այն տարրերի մասին, որոնք համարվում են չպահպանվող, ▪ նիշի կամ դրա բառային տարրերի տառադարձությունը և դրանց հայերեն թարգմանությունը: 	<p>Մտավոր սեփականության գործակալությունը մեկամսյա ժամկետում անցկացնում է Ձեր ներկայացրած հայտի նախնական փորձաքննությունը: Վերջինիս ընթացքում ստուգվում է հայտի փաստաթղթերի և դրանց ներկայացման պայմանների համապատասխանությունը օրենքով սահմանված պահանջներին (տե՛ս արդյունակի ձախ սյունակը):</p> <p>Եթե պարզվում է, որ հայտը չի համապատասխանում սահմանված պահանջներին, ապա Ձեզ ծանուցվում է փաստաթղթերի անհամապատասխանությունները երկամսյա ժամկետում վերացնելու անհրաժեշտության մասին:</p> <p>Եթե նախնական փորձաքննության արդյունքում պարզվում է, որ Ձեր հայտը համապատասխանում է օրենքով սահմանված պահանջներին, ապա որոշում է կայացվում հայտի հրապարակման և ըստ եռօրյա փորձաքննություն անցկացնելու մասին:</p> <p>Չայտի քննարկման ցանկացած փուլում Դուք կարող եք հետ կանչել հայտը կամ սահմանափակել դրանում ընդգրկված ապրանքների ցանկը:</p> <p>Չայտի քննարկման ցանկացած փուլում Դուք կարող եք դիմում ներկայացնել հայտում փոփոխություններ կատարելու մասին, որոնք պայմանավորված են հայտատուի անունը, ազգանունը (անվանումը), գտնվելու վայրը ճշգրտելու, ձևակերպումները հստակեցնելու կամ վրիպակները վերացնելու անհրաժեշտությամբ: Այս փոփոխությունները չպետք է եսպես փոխեն գրանցման համար ներկայացված ապրանքային նշանի պատկերը և հայտում նշված ապրանքների ցանկը:</p>

2.2.2. Հրապարակում և ըստ եռօրյա փորձաքննություն

Մտավոր սեփականության գործակալության ապրանքային նշանների բաժինը Ձեր հայտը հրապարակում և քննարկում է ըստ եռօրյա, որպեսզի ստուգի, թե արդյոք այն համապատասխանում է սահմանված բոլոր պահանջներին (օրինակ՝ արդյոք հայտը համապատասխանում է «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքին, կամ արդյոք հակասություն առկա չէ համապատասխան դասով արդեն իսկ գրանցված ապրանքային նշանի հետ):

Չայտարկվող նշանի ըստ եռօրյա փորձաքննությունն անցկացվում է նախնական փորձաքննությունն ավարտվելուց հետո՝ եռամսյա ժամկետում:

Նախնական փորձաքննությունից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, հայտը հրապարակվում է հնարավոր հանրային դիտողություններ և առարկություններ ստանալու նպատակով: Դուք երկամսյա ժամկետում հնարավորություն ունեք ստացված դիտողությունների և առարկությունների շուրջ ներկայացնել Ձեր նկատառումները:

Ապրանքային նշանի գրանցումը մերժելու կամ մասնակի գրանցման մասին որոշմանը հաջորդող երկամսյա ժամկետում Դուք կարող եք դիմել լրացուցիչ փորձաքննություն անցկացնելու համար՝ բերելով հիմնավոր փաստարկներ: Մտավոր սեփականության գործակալությունը երկամսյա ժամկետում քննարկում է ներկայացված փաստարկները և կայացնում է հետևյալ որոշումներից մեկը՝

- Չեղյալ ճանաչել նախորդ որոշումը և գրանցել ապրանքային նշանը հայտում նշված բոլոր ապրանքների կամ դրանց մի մասի համար կամ
- Ուժի մեջ թողնել ապրանքային նշանի գրանցումը մերժելու կամ մասնակի գրանցման մասին որոշումը:

¹¹ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենք, հոդված 40:
¹² «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենք, հոդված 43:

Հայտի հրապարակումը, երրորդ անձանց դիտողությունները և առարկությունները¹³

Հայտի հրապարակման և ըստ էության փորձաքննությունն անցկացնելու մասին որոշման հիման վրա դրա մեկամսյա ժամկետում Ձեր հայտը հրապարակվում է «Արդյունաբերական սեփականություն» պաշտոնական տեղեկագրում: Հրապարակումը պարունակում է հետևյալ տեղեկատվությունը՝

- Հայտի համարի և ներկայացման թվականը,
- Հայտատուի անունը, ազգանունը կամ անվանումը և գտնվելու վայրը,
- Գրանցման համար ներկայացված ապրանքային նշանի պատկերը,
- Ապրանքների ցանկը, որոնց համար ներկայացված է ապրանքային նշանի գրանցման հայտը:

Հայտի հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում, ցանկացած անձ կարող է ապրանքային նշանի գրանցման դեմ գրավոր դիտողություն կամ առարկություն ներկայացնել Մտավոր սեփականության գործակալություն: Վերջինս հինգ օրվա ընթացքում գրավոր ծանուցում է Ձեզ՝ մեկամսյա ժամկետում Ձեր նկատառումները ներկայացնելու առաջարկությամբ: Նշված ժամկետում Ձեր կողմից նկատառումներ չներկայացնելու դեպքում դիտողությունը քննարկվում է առկա նյութերի հիման վրա:

Դիտողությունների և առարկությունների քննարկման արդյունքում Մտավոր սեփականության գործակալությունը կայացնում է հետևյալ որոշումներից մեկը՝

- Դիտողությունը կամ առարկությունն ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարելու և ապրանքային նշանի գրանցումը հայտի մեջ նշված բոլոր ապրանքների կամ դրանց մի մասի համար մերժելու մասին,
- Դիտողությունը կամ առարկությունը մերժելու մասին:

¹³ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենք, հոդվածներ 44 և 46:

Հայտի ըստ էության փորձաքննությունը¹⁴

Մտավոր սեփականության գործակալությունը հայտի հրապարակումից երեք ամսվա ընթացքում անցկացնում է հայտի ըստ էության փորձաքննություն՝ ստուգելու համար գրանցման համար ներկայացված ապրանքային նշանի համապատասխանությունը «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի հոդված 45-ի սահմանված պահանջներին՝

- Մերժման բացարձակ հիմքերի առկայությունը,
- Մերժման հարաբերական հիմքերի առկայությունը,
- Ստացված դիտողությունները և առարկությունները:

Եթե ապրանքային նշանը պարունակում է տարրեր, որոնք տարբերակիչ հատկություն չունեն և չեն կարող առանձին գրանցվել որպես ապրանքային նշան, ապա Մտավոր սեփականության գործակալությունը ծանուցում է հայտատուին՝ առաջարկելով երկամսյա ժամկետում հայտարարություն ներկայացնել այդ տարրերի նկատմամբ բացառիկ իրավունքի գրանցման հայտից հրաժարվելու մասին:

Փորձաքննության արդյունքում Մտավոր սեփականության գործակալությունը կայացնում է հետևյալ որոշումներից մեկը՝

- Գրանցման համար ներկայացված ապրանքային նշանը հայտում նշված բոլոր ապրանքների համար գրանցելու մասին,
- Ապրանքային նշանը մասնակի գրանցելու մասին,
- Ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին:

Ապրանքային նշանի գրանցումը մերժելու կամ մասնակի գրանցման մասին որոշումից երկու ամսվա ընթացքում Դուք կարող եք կրկնակի փորձաքննություն անցկացնելու մասին դիմում ներկայացնել՝ բերելով հիմնավոր փաստարկներ: Մտավոր սեփականության գործակալությունը երկամսյա ժամկետում, քննարկում է ներկայացված փաստարկները և կայացնում է հետևյալ որոշումներից մեկը՝


- Չեղյալ ճանաչել նախորդ որոշումը և գրանցել ապրանքային նշանը հայտում նշված բոլոր ապրանքների կամ դրանց մի մասի համար,
- Ուժի մեջ թողնել ապրանքային նշանի գրանցումը մերժելու կամ մասնակի գրանցման մասին որոշումը:

Ապրանքային նշանի գրանցումը չի կարող մերժվել առանց Ձեզ հնարավորություն ընձեռելու հետ կանչել կամ փոփոխություններ կատարել հայտի մեջ կամ փաստարկներ ներկայացնել ապրանքային նշանի գրանցման օգտին:

¹⁴ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենք, հոդված 45:

**Մտավոր սեփականության գործակալության
«Արդյունաբերական սեփականություն» պաշտոնական
տեղեկագրում հրապարակված հայտի օրինակներ¹⁵**

(210) 20160225
(220) 26.02.2016
(730) «Մերրի տուր» ՍՊԸ, Երևան, Մամիկոնյանց
49/1, բն. 36, AM
(540)



(540)
դաս 39. տրանսպորտ (փոխադրումներ),
ապրանքների փաթեթավորում և պահպանում.
ճանապարհորդությունների կազմակերպում.
դաս 43. տեղերի ամրագրում ժամանակավոր
բնակության համար:

(210) 20160251
(220) 02.03.2016
(730) «Անիսոն գրուպ» ՍՊԸ, ք. Աբովյան
Հանրապետության 30, բն. 14, AM
(540)

CORPAXAN

(511)
դաս 5. սննդային հավելումներ բուժական
նպատակների համար, կենսաբանորեն ակտիվ
հավելումներ:

2.3. Բողոքարկում

Ապրանքային նշանի գրանցումը մերժելու կամ մասնակի գրանցման մասին կրկնակի փորձաքննության որոշմանը չհամաձայնելու դեպքում երեք ամսվա ընթացքում կարող եք բողոք ներկայացնել բողոքարկման խորհուրդ: Բողոքի քննարկման արդյունքում բողոքարկման խորհուրդը կայացնում է հետևյալ որոշումներից մեկը՝

- Բողոքը բավարարել ամբողջությամբ կամ մասնակիորեն և գրանցել ապրանքային նշանը հայտարկված բոլոր ապրանքների կամ դրանց մի մասի համար,
- Բողոքը մերժել և ուժի մեջ թողնել ապրանքային նշանի գրանցումը մերժելու կամ մասնակի գրանցման մասին կրկնակն փորձաքննության որոշումը:

¹⁵ N 03/2, 2016: Հղում՝ http://aipa.am/u_files/file/TMapplications/2016_03_2.pdf:

Բողոքարկման խորհրդի որոշումը համարվում է պետական լիազոր մարմնի վերջնական որոշում: Բողոքարկման խորհրդի որոշումը կարող եք վիճարկել դատական կարգով վեցամսյա ժամկետում:

Բողոքարկման խորհուրդ բողոք ներկայացնելու համար պետական տուրք, դրամ

Ֆիզ. անձանց կամ մինչև 25 աշխատող ունեցող իրավ. անձանց կամ անհատ ձեռնարկատերերի համար	25-ից 100 աշխատող ունեցող իրավ. անձանց կամ անհատ ձեռնարկատերերի համար	100-ից ավելի աշխատող ունեցող իրավ. անձանց կամ անհատ ձեռնարկատերերի համար
12500	25000	50000

2.4. Գրանցում

Եթե որոշվել է, որ մերժման հիմքեր չկան, ապրանքային նշանը գրանցվում է և տրվում է գրանցման վկայական, որն ուժի մեջ է 10 տարի:

Ապրանքային նշանի գրանցման համար պետական տուրքի չափ, դրամ

Ֆիզ. անձանց կամ մինչև 25 աշխատող ունեցող իրավ. անձանց կամ անհատ ձեռնարկատերերի համար	25-ից 100 աշխատող ունեցող իրավ. անձանց կամ անհատ ձեռնարկատերերի համար	100-ից ավելի աշխատող ունեցող իրավ. անձանց կամ անհատ ձեռնարկատերերի համար
12500	25000	50000

Ծախսերի հաշվարկի օրինակ

Ստորև ներկայացված է ապրանքային նշանի գրանցման ողջ շրջայի հիմնական գործընթացների պետական տուրքերի ծախսի չափի օրինակը:

Ֆիզիկական անձանց կամ մինչև 25 աշխատող ունեցող իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի համար պետական տուրքերի չափը, դրամ

Վճարման նպատակ	Տուրք, դրամ
Գրանցման հայտ ներկայացնելու համար	7500
Փորձաքննություն անցկացնելու համար*	10000
Գրանցման համար	12500
Ընդամենը՝	30000

* Մեկ դասի համար:

2.5. Ապրանքային նշանի նկատմամբ իրավունքների դադարումը

<p>Ապրանքային նշանի գրանցման գործողությունը կարող է ցանկացած անձի դիմումի հիման վրա, դատարանի որոշմամբ, դադարեցվել վաղաժամկետ բոլոր ապրանքների նկատմամբ, որոնց համար այն գրանցված է, կամ դրանց մի մասի նկատմամբ:</p> <p>Դրա համար անհրաժեշտ է, որպեսզի ապրանքային նշանի գրանցումից հետո 5 հաջորդական տարիների ընթացքում այն ընդհանրապես օգտագործված չլինի կամ իրական օգտագործման մեջ դրված չլինի նշանի իրավատիրոջ կողմից¹⁶:</p>	<p>Եթե ապրանքային նշանի իրավատերը հինգ տարվա ընթացքում գիտակցաբար հանդուրժել է ավելի ուշ գրանցված ապրանքային նշանի օգտագործումը, այլևս չի կարող դատարան հայց ներկայացնել ավելի ուշ գրանցված ապրանքային նշանն անվավեր ճանաչելու մասին:</p>
--	---

¹⁶ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենք, հոդվածներ 21 և 23:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1. Գրանցման հայտի ձևաթուղթը

Հայտ		Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալություն	
ապրանքային նշանի գրանցման		Գլխավոր պողոտա, Կառավարական տուն 3, 3,0010, Երևան	
1. Սույնով խնդրարկվում է ներկայացված ապրանքային նշանի գրանցում	(լրացնում է գործակալությունը)	(լրացնում է գործակալությունը)	
2. Հայտատու՝	երկրի ծածկագիրը ըստ ՄՄՀՎ ՏՏ3-ի		
2.1. իրավաբանական անձի լրիվ անվանումը կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը՝	<input type="checkbox"/> քաղաքացիության <input type="checkbox"/> բնակության երկրի <input type="checkbox"/> իրավական գործունեության		
2.2. հայտատուի գտնվելու վայրը (հասցեն)՝			
2.3. հեռախոսահամարը	Ֆաքսը	Էլ. փոստի հասցեն	
2.4. 0 մեկից ավելի հայտատուներ (հայտատուներին մասին տվյալներն ըստ 2.1-2.3-րդ կետերի տրվում են լրացուցիչ թղթի վրա)			
3. 0 Հայտատուի ներկայացուցիչը՝			
3.1. ներկայացուցչի լրիվ անվանումը կամ անունը, ազգանունը՝			
3.2. ներկայացուցչի գտնվելու վայրը (հասցեն)՝		<input type="checkbox"/> լիազորագիրը գործակալությունում է, հայտ N <input type="checkbox"/> լիազորագիրը կցվում է <input type="checkbox"/> լիազորագիրը կներկայացվի ավելի ուշ	
3.3. հեռախոսահամարը	Ֆաքսը	Էլ. փոստի հասցեն	
4. Նամակագրության հասցեն՝ (փոստային հասցեն, հեռախոսահամարը, ֆաքսը, էլ. փոստի հասցեն)			
5. Ապրանքային նշանը՝		5.1. ապրանքային նշանի համառոտ նկարագրությունը, տառադարձությունն ու կառուցվածքը	
5.1. ապրանքային նշանի պատկերը <input type="checkbox"/> չափերը գերազանցում են 8 x 8 սմ (պատկերը կցվում է)			
5.3. 0 նշանը գրանցել և հրապարակել, ստանդարտ նիշերով		5.11. 0 նշանը գունավոր է, գույները, որոնց համար խնդրարկվում է պահպանությունը՝	
5.4. 0 որպես տարբերակիչ տարր խնդրարկվում է գույնի պահպանություն		5.12. 0 չպահպանվող տարրերն են՝	
5.5. 0 նշանը ծավալային է (լրացուցիչ պատկերները կցվում են)		5.13. 0 նշանը գրանցված է ծագման երկրում, վկայագրի պատճենը կցվում է	
5.6. 0 նշանը հոլոգրաֆիական է		5.14. 0 կցվում է նշանի 5 սև-սպիտակ պատկեր	
5.7. 0 նշանը տեղադրական է		5.15. 0 կցվում է նշանի 5 գունավոր պատկեր	
5.8. 0 նշանը ձայնային է			
5.9. 0 նշանը հավաստագրային է			
5.10. 0 նշանը կրեկտիվ է, կանոնակարգը կցվում է			

6. Ինդերարկվում է առաջնությունը		6.2. Գուցահանդեսում ցուցանվողի առաջին ցուցադրման թվականով մանրամասները լրացուցիչ թերթի վրա և ցուցահանդեսի կազմակերպչի տված հավաստագիրը	
6.1. Ը առաջին հայտի ներկայացման թվականով		Ը կցվում են Ը կներկայացվեն սույն հայտի ներկայացման օրվանից 3 ամսվա ընթացքում	
6.3. առաջին հայտի N	6.4. առաջին հայտի ներկայացման թվականը	6.5. առաջին հայտի ներկայացման երկիրը (կազմակերպությունը) ըստ ՄՄՀԿ ST3-ի	
6.6. Ը առաջին հայտի վավերացված պատճենը կցվում է		6.8. Ը առաջին հայտի թարգմանությունը կցվում է	
6.7. Ը առաջին հայտի պատճենը կներկայացվի սույն հայտի ներկայացման օրվանից 3 ամսվա ընթացքում		6.9. Ը առաջին հայտի թարգմանությունը կներկայացվի սույն հայտի ներկայացման օրվանից 3 ամսվա ընթացքում	
6.10. Ը մեկից ավելի առաջնություններ (6.3.-6.9.-րդ կետերի տվյալները ներկայացվում են լրացուցիչ թղթի վրա)			
7. ԱՏՄԴ-ի դասերին համապատասխան խմբավորված ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկը, որոնց համար խնդրարկվում է գրանցումը			
ԱՏՄԴ-ի դասը		ապրանքները և (կամ) ծառայությունները	
Ը ապրանքների և ծառայությունների ցանկի շարունակությունը տրված է լրացուցիչ թղթի վրա			
8. Ստորագրությունը _____			
8.1. _____ (անունը, ազգանունը, պաշտոնը)			
8.2. թվականը _____ 201 թ.			
8.3. ստորագրողը Ը հայտատուն է Ը հայտատուի ներկայացուցիչն է			
9. Ը Վճարված է _____ դրամ պետական տուրք, Ը անդորրագիրը կցվում է			
9.1. վճարման ձևը _____			
10. Ը Հայտին կից ներկայացվում են՝ _____ լրացուցիչ թերթեր, Ը այլ փաստաթղթեր			
_____ (անունը, ազգանունը, պաշտոնը)			

Հավելված 2. Դասակարգման միջազգային համակարգ

Դաս 1. քիմիական նյութեր, որոնք նախատեսված են օգտագործելու արդյունաբերական և գիտական նպատակներով, լուսանկարչության, գյուղատնտեսության, այգեգործության և անտառաբուծության մեջ: Չմշակված սիլիսեթիկ խեժեր, չմշակված պլաստմասսաներ, պարարտանյութեր, կրակ մարող բաղադրություններ, քիմիական նյութեր մետաղների զոդման և միսման համար, քիմիական նյութեր սևնդամթերքի պահածոյացման համար, դաբադիչ նյութեր, սոսնձող նյութեր արդյունաբերական նպատակներով օգտագործելու համար:

Դաս 2. ներկեր, արծնուկներ, լաքեր, մետաղը ժանգոտումից և փայտանյութը քայքայումից պաշտպանող նյութեր, ներկանյութեր, խածանյութեր, ներկանյութերի սևեռակայիչներ, չմշակված բնական խեժեր, թերթավոր և փոշենման մետաղներ՝ գեղարվեստական, գեղազարդման նպատակների և գեղարվեստական տպագրության համար:

Դաս 3. սպիտակեցնող պատրաստուկներ և այլ նյութեր լվացքի համար, պատրաստուկներ մաքրման, ողորկման (փայլեցման), ճարպագերծման և հղկամշակման համար, օճառներ, օճանելիք, եթերային յուղեր, կոսմետիկական միջոցներ, լոսյոններ մազերի համար, ատամի փոշիներ և մածուկներ:

Դաս 4. տեխնիկական յուղեր և (թանձր) քսուքներ, քսանյութեր, փոշու կլանման, թրջման և կապակցման բաղադրություններ, վառելիք (ներառյալ՝ շարժիչային բենզինը) և նյութեր լուսավորման նպատակների համար, մոմեր, պատրույգներ լուսավորման համար:

Դաս 5. դեղագործական և անասնաբուժական պատրաստուկներ, հիգիենիկ պատրաստուկներ բուժական նպատակների համար, դիետիկ սնունդ և նյութեր բուժական կամ անասնաբուժական նպատակների համար, դիետիկ հավելումներ մարդկանց և կենդանիների համար, մանկական սնունդ, սպեղանալաթեր, վիրակապման նյութեր, ատամնալցման և ատամների ծեփապատճեններ

պատրաստելու նյութեր, ախտահանիչ միջոցներ, վնասատու կենդանիների ոչնչացման պատրաստուկներ, ֆունգիցիդներ, հերբիցիդներ:

Դաս 6. սովորական մետաղներ և դրանց համահավվածքներ, մետաղյա շինանյութեր, շարժական մետաղյա կառուցվածքներ և շինություններ, մետաղյա նյութեր ռելսուղիների համար, մետաղյա ճոպաններ և լարեր, մետաղակապեր և փականքային իրեր, մետաղյա խողովակներ, չիրկիզվող պահարաններ, սովորական մետաղներից պատրաստված իրեր, որոնք ընդգրկված չեն այլ դասերում, հանքանյութեր:

Դաս 7. մեքենաներ և հաստոցներ, շարժիչներ (բացառությամբ վերգետնյա տրանսպորտային միջոցների համար նախատեսվածների), կցորդիչներ, միացքներ, կցիչներ և փոխանցման տարրեր (բացառությամբ վերգետնյա տրանսպորտային միջոցների համար նախատեսվածների), գյուղատնտեսական գործիքներ, բացառությամբ ձեռքով կառավարվողների, ինկուբատորներ, առևտրի ավտոմատներ:

Դաս 8. ձեռքի գործիքներ, դանակավոր իրեր, պատառաքաղներ և գդալներ, սառը զենք, ածելիներ:

Դաս 9. գիտական, ծովային, երկրաբաշխական, լուսանկարչական, կինեմատոգրաֆիական, օպտիկական, կշռման, չափման, ազդանշանման, հսկման (ստուգման), փրկության և ուսուցման սարքեր ու գործիքներ, էլեկտրականության հաղորդման, միացման, փոխակերպման, կուտակման, կարգավորման կամ վերահսկման սարքեր և գործիքներ, ձայնի կամ պատկերի գրառման, հաղորդման կամ վերարտադրման սարքեր, մագնիսական տեղեկակիրներ, ձայնագրման սկավառակներ, կոմպակտ սկավառակներ, DVD-ներ և տեղեկատվության այլ թվային կրիչներ, կանխավճարով աշխատող սարքերի մեխանիզմներ, դրամարկղային ապարատներ, հաշվիչ մեքենաներ, տեղեկատվության մշակման սարքավորումներ և համակարգիչներ, համակարգչային ծրագրային ապահովում, կրակմարիչներ:

Դաս 10. վիրաբուժական, բժշկական, ատամնաբուժական և անասնաբուժական սարքեր և գործիքներ, վերջավորությունների պրոթեզներ, աչքերի և ատամների պրոթեզներ, ոսկրաբուժական իրեր, նյութեր կարեր դնելու համար:

Դաս 11. լուսավորման, ջեռուցման, շոգու արտադրման, սննդամթերքի ջերմամշակման, սառեցման, չորացման, օդափոխման, ջրաբաշխման և սանիտարատեխնիկական սարքեր:

Դաս 12. տրանսպորտային միջոցներ, ցամաքով, օդով կամ ջրով տեղաշարժվող սարքեր:

Դաս 13. հրազեն, ռազմամթերք և արկեր, պայթուցիկ նյութեր, հրավառելիք:

Դաս 14. ազնիվ մետաղներ և դրանց համահավվածքներ, դրանցից պատրաստված կամ դրանցով պատված իրեր, որոնք ընդգրկված չեն այլ դասերում, ոսկերչական իրեր, զարդեր, թանկարժեք քարեր, ժամացույցներ և այլ ժամանակաչափ սարքեր:

Դաս 15. երաժշտական գործիքներ:

Դաս 16. թուղթ, սովարաթուղթ և դրանցից պատրաստված իրեր, որոնք ընդգրկված չեն այլ դասերում, տպագրական արտադրանք, նյութեր կազմարարական աշխատանքների համար, լուսանկարներ, թղթագրենական պիտույքներ, կպչուն նյութեր գրասենյակային կամ կենցաղային նպատակների համար, պիտույքներ նկարիչների համար, վրձիններ, գրամեքենաներ և գրասենյակային պիտույքներ (բացառությամբ կահույքի), ուսուցողական նյութեր և դիտողական ձեռնարկներ (բացառությամբ սարքավորումների), պլաստմասսե նյութեր փաթեթավորման համար, որոնք ընդգրկված չեն այլ դասերում, տառաշարեր, տպագրական կլիշեներ:

Դաս 17. կաուչուկ, ռետին, գուտապերչ, ասբեստ, փայլար և այդ նյութերից պատրաստված իրեր, որոնք ընդգրկված չեն այլ դասերում, մասնակի մշակված պլաստմասսայից իրեր, խճուժման, խցման և մեկուսացման նյութեր, ոչ մետաղյա ճկուն խողովակներ:

Դաս 18. կաշի և կաշվի նմանակումներ, դրանցից պատրաստված իրեր, որոնք ընդգրկված չեն այլ դասերում, կենդանիների մորթիներ, սնդուկներ և ճամփորդական ճամպրուկներ, անձրևակալներ և հովանոցներ, ձեռնափայտեր, մտրակներ, լծասարքեր և թամբագործական իրեր:

Դաս 19. ոչ մետաղյա շինանյութեր, ոչ մետաղյա կոշտ խողովակներ շինարարական նպատակների համար, ասֆալտ, խեժեր և բիտում, ոչ մետաղյա շարժական կառուցվածքներ և շինություններ, ոչ մետաղյա հուշարձաններ:

Դաս 20. կահույք, հայելիներ, նկարների շրջանակներ, փայտից, խցանից, եղեգից, ուռեմուց, եղջյուրից, ոսկրից, փղոսկրից, կետի բեղից, կրիայի գրահից, խեցուց, սաթից, սաղափից, ծովի փրփուրից, այդ նյութերի փոխարինիչներից կամ պլաստմասսայից պատրաստված իրեր, որոնք ընդգրկված չեն այլ դասերում:

Դաս 21. տնային կամ խոհանոցային կահկարասի և սպասք, սանրեր և սպունգներ, խոզանակներ (բացառությամբ նկարչական վրձինների) և դրանց պատրաստման նյութեր, իրեր մաքրման նպատակների համար, պողպատյա տաշեղ, չմշակված կամ մասնակի մշակված ապակի (բացառությամբ շինարարական ապակու), ապակյա, հախճապակյա և ճենապակյա իրեր, որոնք ընդգրկված չեն այլ դասերում:

Դաս 22. ճոպաններ, պարաններ, առասաններ, ցանցեր, վրաններ, ծածկարաններ, բրեզենտ, առագաստներ, պարկեր և տոպրակներ (որոնք ընդգրկված չեն այլ դասերում), խճուժման նյութեր (բացառությամբ ռետինից և պլաստմասսայից պատրաստվածների), մանածագործական թելքահումք:

Դաս 23. մանվածք և թելեր մանածագործության համար:

Դաս 24. գործվածքներ և մանածագործական ապրանքներ, որոնք ընդգրկված չեն այլ դասերում, անկողնու ծածկոցներ և սեղանի ծածկոցներ:

Դաս 25. հագուստ, կոշկեղեն, գլխարկներ:

Դաս 26. ժանյակներ և ասեղնագործված իրեր, երիզներ և ժապավեններ, կոճակներ, սեղմակոճակներ, կեռիկներ և ամրոզակներ, գնդասեղներ և ասեղներ, արհեստական ծաղիկներ:

Դաս 27. գորգեր, հատակի ծածկոցներ, խսիրներ, լինոլեում և այլ հատակածածկույթներ, պատի պաստառներ (ոչ մանածագործական):

Դաս 28. խաղեր և խաղալիքներ, մարմնամարզական և սպորտային իրեր, որոնք ընդգրկված չեն այլ դասերում, տոնածառի զարդեր:

Դաս 29. միս, ձուկ, թռչնամիս և որսամիս, մսի էքստրակտներ, պահածոյացված, սառեցված, չորացված և ջերմամշակման ենթարկված մրգեր և բանջարեղեն, դոնդող, մուրաբա, կոմպոտ, ձու, կաթ և կաթնամթերք, սննդային յուղեր և ճարպեր:

Դաս 30. սուրճ, թեյ, կակաո և սուրճի փոխարինիչներ, բրինձ, տապիոկա, սագո, ալյուր և հացահատիկային մթերքներ, հաց, հրուշակեղեն և քաղցրավենիք, պաղպաղակ, շաքար, մեղր, մաթ, խմորիչներ, հացաթխման փոշիներ, աղ, մանանեխ, քացախ, սոուսներ (համեմուկք), համեմուկք, սառույց:

Դաս 31. հացահատիկ, գյուղատնտեսական, այգեգործական, անտառային և հացահատիկային մթերքներ, որոնք ընդգրկված չեն այլ դասերում, կենդանիներ, թարմ մրգեր և բանջարեղեն, սերմեր, բնական բույսեր և ծաղիկներ, կեր կենդանիների համար, ածիկ:

Դաս 32. գարեջուր, հանքային և գազավորված ջրեր և այլ ոչ ալկոհոլային ըմպելիքներ, մրգային ըմպելիքներ և մրգահյութեր, օշարակներ և ըմպելիքների պատրաստման այլ բաղադրանյութեր:

Դաս 33. ալկոհոլային խմիչքներ (բացառությամբ գարեջրի):

Դաս 34. ծխախոտ, ծխելու պիտույքներ, լուցկի:

Դաս 35. գովազդ, գործերի կառավարում գործարարության ասպարեզում, վարչարարական գործունեություն գործարարության ասպարեզում, գրասենյակային ծառայություններ:

Դաս 36. ապահովագրություն, ֆինանսական գործունեություն, դրամավարկային գործառնություններ, անշարժ գույքի հետ կապված գործառնություններ:

Դաս 37. շինարարություն, նորոգում, սարքավորումների տեղակայում:

Դաս 38. հեռահաղորդակցություն:

Դաս 39. տրանսպորտ (փոխադրումներ), ապրանքների փաթեթավորում և պահպանում, ճանապարհորդությունների կազմակերպում:

Դաս 40. նյութերի մշակում:

Դաս 41. կրթություն (դաստիարակություն, ուսուցում), ուսումնական գործընթացի ապահովում, զվարճություններ, մարզական և մշակութային միջոցառումների կազմակերպում:

Դաս 42. գիտական և տեխնոլոգիական ծառայություններ և հետազոտություններ և դրանց հետ կապված մշակումներ, արդյունաբերական վերլուծություններ և հետազոտություններ, համակարգչային սարքերի և ծրագրերի մշակում և կատարելագործում:

Դաս 43. սննդամթերքով և ըմպելիքներով ապահովման ծառայություններ, ժամանակավոր բնակատեղով ապահովում:

Դաս 44. բժշկական ծառայություններ, անասնաբուժական ծառայություններ, կենդանիների և մարդկանց հիգիենիկ և կոսմետիկական ծառայություններ, գյուղատնտեսական, այգեգործական և անտառային ծառայություններ:

Դաս 45. իրավաբանական ծառայություններ, անվտանգության ծառայություններ սեփականության և անհատի պաշտպանության համար, այլ անձանց կողմից մատուցվող անհատական և սոցիալական ծառայություններ անհատի կարիքները հոգալու համար:

Հավելված 3. Ապրանքային նշանների գործառնությունների պետական տուրքերը

Պետական տուրքի վճարի նպատակները և չափերը, ըստ հայտատուի տեսակի, դրամ¹⁷

Վճարման նպատակ	Ֆիզ. անձանց կամ մինչև 25 աշխատող ունեցող իրավ. անձանց կամ անհատ ձեռնարկատերերի համար	25-ից 100 աշխատող ունեցող իրավ. անձանց կամ անհատ ձեռնարկատերերի համար	100-ից ավելի աշխատող ունեցող իրավ. անձանց կամ անհատ ձեռնարկատերերի համար
Գրանցման հայտ ներկայացնելու համար	7500	15000	30000
Փորձաքննություն անցկացնելու համար	10000	20000	40000
մեկից ավելի յուրաքանչյուր դասի համար` լրացուցիչ	3750	7500	15000
Իրավական պահպանության հետ կապված գործողությունների գծով առաջնության իրավունքից օգտվելու համար	2500	5000	10000

¹⁷ Ցանկն առկա է Մտավոր սեփականության գործակալության «Ձևաթղթեր և տուրքեր» բաժնի «Վճարման եղանակը» ենթաբաժնում: Հղում` <http://aipa.am/hy/payment-method/>: Պետական տուրքերի էլեկտրոնային համակարգում հղում` <https://www.e-payments.am/hy/state-duties/step2/group=25/>:

Վճարման Նպատակ	Ֆիզ. անձանց կամ մինչև 25 աշխատող ու.ն.եցող իրավ. անձանց կամ անհատ ձեռ- նարկատերերի համար	25-ից 100 աշխատող ու.ն.եցող իրավ. անձանց կամ անհատ ձեռ- նարկատերերի համար	100-ից ավելի աշխատող ու.ն.եցող իրավ. անձանց կամ անհատ ձեռ- նարկատերերի համար
Հայտում փոփոխություն կատարելու համար	2500	5000	10000
Հայտի գատման համար	3750	7500	15000
Գրանցման համար	12500	25000	50000
Իրավական պահպանության հետ կապված գործողությունների գծով պետական լիազոր մարմնում որևէ գործընթացի իրականացման ժամկետի բացթողնման հետևանքով կորցրած իրավունքի վերականգնման մասին դիմում ներկայացնելու համար	5000	10000	20000

Վճարման Նպատակ	Ֆիզ. անձանց կամ մինչև 25 աշխատող ու.ն.եցող իրավ. անձանց կամ անհատ ձեռ- նարկատերերի համար	25-ից 100 աշխատող ու.ն.եցող իրավ. անձանց կամ անհատ ձեռ- նարկատերերի համար	100-ից ավելի աշխատող ու.ն.եցող իրավ. անձանց կամ անհատ ձեռ- նարկատերերի համար
Իրավական պահպանության հետ կապված գործողությունների գծով իրավունքների վերականգնման մասին որոշման դեմ բողոքարկման խորհուրդ բողոք ներկայացնելու համար	12500	25000	50000
Գրանցումը մերժելու կամ մասնակի գրանցման մասին կրկնակի փորձաքննության որոշման հետ չհամաձայնելու դեպքում բողոքարկման խորհրդին բողոք ներկայացնելու համար	12500	25000	50000

Վճարման նպատակ	Ֆիզ. անձանց կամ մինչև 25 աշխատող ու.ն.եցող իրավ. անձանց կամ անհատ ձեռ- նարկատերերի համար	25-ից 100 աշխատող ու.ն.եցող իրավ. անձանց կամ անհատ ձեռ- նարկատերերի համար	100-ից ավելի աշխատող ու.ն.եցող իրավ. անձանց կամ անհատ ձեռ- նարկատերերի համար
Իրավական պահպանության հետ կապված գործողությունների գծով բաց թողած ժամկետի վերականգնման համար	7500	15000	30000
Իրավական պահպանության հետ կապված գործողությունների գծով պետական լիազոր մարմնում որևէ գործընթացի գործողություն կատարելու համար նախատեսված ժամկետի երկարաձգման համար	2500	5000	10000
Վկայագրի կրկնակ տալու համար	7500	15000	30000

Վճարման նպատակ	Ֆիզ. անձանց կամ մինչև 25 աշխատող ու.ն.եցող իրավ. անձանց կամ անհատ ձեռ- նարկատերերի համար	25-ից 100 աշխատող ու.ն.եցող իրավ. անձանց կամ անհատ ձեռ- նարկատերերի համար	100-ից ավելի աշխատող ու.ն.եցող իրավ. անձանց կամ անհատ ձեռ- նարկատերերի համար
Պետական գրանցա- մատյանում ապրանքային նշանի նկատմամբ իրավունքների փոխանցումը գրանցելու համար (պայմանագրով նախատեսված յուրաքանչյուր ապրանքային նշանի համար)	15000	30000	60000
Պետական գրանցամատյանում փոփոխություն կատարելու համար	5000	10000	20000
Իրավական պահպանության հետ կապված գործողությունների գծով հայտարկված ապրանքային նշանի գրանցման դեմ առարկություն ներկայացնելու համար	10000	10000	10000

Վճարման Նպատակ	Ֆիզ. անձանց կամ մինչև 25 աշխատող ու.ն.եցող իրավ. անձանց կամ անհատ ձեռ- նարկատերերի համար	25-ից 100 աշխատող ու.ն.եցող իրավ. անձանց կամ անհատ ձեռ- նարկատերերի համար	100-ից ավելի աշխատող ու.ն.եցող իրավ. անձանց կամ անհատ ձեռ- նարկատերերի համար
Իրավական պահպանության հետ կապված գործողությունների գծով յուրա- քանչյուրի կոլեկ- տիվ նշանի և հավաստագրային նշանի գրանցման համար	90000	90000	90000
Հայաստանի Հանրա- պետությունում հան- րահայտ ճանաչելու համար	250000	250000	250000
Գրանցման գործողության ժամկետը երկարաձգելու համար	120000	120000	120000
Մեկից ավելի յուրա- քանչյուր դասի համար՝ լրացուցիչ	10000	10000	10000

Վճարման Նպատակ	Ֆիզ. անձանց կամ մինչև 25 աշխատող ու.ն.եցող իրավ. անձանց կամ անհատ ձեռ- նարկատերերի համար	25-ից 100 աշխատող ու.ն.եցող իրավ. անձանց կամ անհատ ձեռ- նարկատերերի համար	100-ից ավելի աշխատող ու.ն.եցող իրավ. անձանց կամ անհատ ձեռ- նարկատերերի համար
Ապրանքային նշանների պետա- կան գրանցամատ- յանում ապրան- քային նշանի լիցենզիայի կամ ենթալիցենզիայի գրանցման համար (պայմանագրով նախատեսված յուրաքանչյուր ապրանքային նշանի համար)	60000	60000	60000
Գրանցված լիցենզիայի կամ ենթալիցենզիայի պայմանների փոփոխությունների կամ դրա չեղյալ հայտարարումը գրանցելու համար	25000	25000	25000
Գրանցումը զատելու համար	40000	40000	40000

Վճարման նպատակ	Ֆիզ. անձանց կամ մինչև 25 աշխատող ու.նեցող իրավ. անձանց կամ անհատ ձեռ- նարկատերերի համար	25-ից 100 աշխատող ու.նեցող իրավ. անձանց կամ անհատ ձեռ- նարկատերերի համար	100-ից ավելի աշխատող ու.նեցող իրավ. անձանց կամ անհատ ձեռ- նարկատերերի համար
Միջազգային գրանցման կամ տարածքային ընդարձակման հայտ ներկայացնելու համար	50000	50000	50000
Միջազգային գրանցման մասին Մադրիդյան համաձայնագրի արձանագրու- թյան 8(7)(a) հոդվածի համա- ձայն՝ յուրաքանչ- յուր միջազգային գրանցման նկատ- մամբ Հայաստանի Հանրապետությունը 3եր հոդվածին համապատասխան նշելու համար			
Մեկ դասի ապրանքների համար	100000	100000	100000
Մեկից ավելի յուրաքանչյուր դասի համար	10000	10000	10000

Վճարման նպատակ	Ֆիզ. անձանց կամ մինչև 25 աշխատող ու.նեցող իրավ. անձանց կամ անհատ ձեռ- նարկատերերի համար	25-ից 100 աշխատող ու.նեցող իրավ. անձանց կամ անհատ ձեռ- նարկատերերի համար	100-ից ավելի աշխատող ու.նեցող իրավ. անձանց կամ անհատ ձեռ- նարկատերերի համար
Այդպիսի միջազգային գրանցումը երկարաձգելու համար			
Մեկ դասի ապրանքների համար	100000	100000	100000
Մեկից ավելի յուրաքանչյուր դասի համար	10000	10000	10000
Ապրանքային նշանների պետա- կան գրանցա- մատյանում և ապրանքային նշանների հայտերի ընթացիկ հիմնապա- շարում որոնում անցկացնելու համար			

Վճարման Նպատակ	Ֆիզ. անձանց կամ մինչև 25 աշխատող ու՛նեցող իրավ. անձանց կամ անհատ ձեռ- նարկատերերի համար	25-ից 100 աշխատող ու՛նեցող իրավ. անձանց կամ անհատ ձեռ- նարկատերերի համար	100-ից ավելի աշխատող ու՛նեցող իրավ. անձանց կամ անհատ ձեռ- նարկատերերի համար
Ապրանքների և ծառայությունների միջազգային դասակարգմանը համապատասխան յուրաքանչյուր դասով ներկայացված բառային կամ պատկերային նշանին նույնական կամ նման ապրանքային նշանների համար	20000	20000	20000
Ապրանքների և ծառայությունների միջազգային դասակարգմանը համապատասխան յուրաքանչյուր դասով ներկայացված համակցված նշանին նույնական կամ նման ապրանքային նշանների համար	40000	40000	40000

Վճարման Նպատակ	Ֆիզ. անձանց կամ մինչև 25 աշխատող ու՛նեցող իրավ. անձանց կամ անհատ ձեռ- նարկատերերի համար	25-ից 100 աշխատող ու՛նեցող իրավ. անձանց կամ անհատ ձեռ- նարկատերերի համար	100-ից ավելի աշխատող ու՛նեցող իրավ. անձանց կամ անհատ ձեռ- նարկատերերի համար
Մեկ սեփականատիրոջը և (կամ) հայտատուին պատկանող ապրանքային նշանների համար	60000	60000	60000

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԻ

ԳՐԱՆՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ